Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-038[1]-17.08.2012-ՏՀ-010/2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (12 հունիսի 2000 թվականի, ՀՕ-60) 3-րդ հոդվածի 3-րդ մասում «և (կամ) բնապահպանական տեսչական մարմինների,» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում իրականացվող ստուգումների,» բառերը:

Տեղեկանք-Ամփոփոթերթ
«««Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին»» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը (առարկության, առաջարկության ստացման ամսաթիվը)	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**
1. ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ. Նաղդալյան 05.04.2013թ.	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին պարբերությունում ներկայացված է անոմալիա/շեղում հասկացությունը, այն է՝ միջուկային նյութերի կորուստ կամ ավելցուկ, կնիքների վնասում/կոտրում, միջուկային նյութերի օգտագործման, պահեստավորման, փոխադրման ընթացակարգերի խախտում: Առաջարկվում է «կնիքների» բառը փոխարինել եզակի «կնիք» բառով, քանզի յուրաքանչյուր կնիքի վնասում/կոտրում պետք է դիտվի որպես անոմալիա/շեղում: Միաժամանակ ներկայացված հասկացությունում բացակայում է միջուկային նյութի պահպանման գործընթացը, ինչպես նաեւ նպատակահարմար է, որպեսզի հասկացությունում միջուկային նյութի օգտագործման գործընթացին նախորդի պահեստավորման, պահպանման եւ հետո միայն օգտագործման ընթացակարգը, որով կապահովվի հստակ հաջորդականությունը:	Առաջարկությունն ընդունվել է. Կատարվել է համապատասխան փոփոխություն
	Նախագծի 1-ին հոդվածում «միջուկային օգտագործում» հասկացությունից հետո հաջորդ պարբերությունում ներկայացված է «ներպետական փոխադրում» հասկացությունը եւ այնուհետ «ոչ	Առաջարկությունն ընդունվել է. Կատարվել է համապատասխան փոփոխություն

	միջուկային օգտագործում» հասկացությունը: Կարծում եմ հաջորդականության տեսանկյունից նպատակահարմար կլիներ, որպեսզի «միջուկային օգտագործում» հասկացությանը հաջորդեր «ոչ միջուկային օգտագործում» հասկացությունը եւ հետո միայն «ներպետական փոխադրում» հասկացությունը:	